ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ- 2007

## Բովանդակություն


*Նախաբան*..........................................................................................3

1. *Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում*........3

2. *Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում* ............................................................................12

3. *Սակագնային քաղաքականություն* ......................................................13

4. *Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն* ..................................................17

5. *Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում* .......18

6. *Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում* .............................................. 22

7. *Սպառողների հետ տարվող աշխատանքներ*..................................26

8. *Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ*..................26

9. *Համագործակցություն* .........................................................................27

## *Նախաբան*

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  - բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## *1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում*

Կարգավորվող ոլորտների օրենսդրական դաշտի կատարելագործումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը: Հանձնաժողովի կարգավորման դաշտում գտնվող տարբեր բնագավառներ ունեն զարգացածության տարբեր մակարդակներ և կարգավորման ենթակա խնդիրների համախումբ: Այս առումով յուրաքանչյուր բնագավառում առկա տարատեսակ խնդիրներին համահունչ օրենսդրական դաշտի և կարգավորման կանոնների սահմանումն ու շարունակական կատարելագործումը միայն կարող է

նպաստել կարգավորվող ընկերությունների և սպառողների շահերի հավասարակշռմանը և իրավատնտեսական արդարացի հարաբերությունների ձևավորմանը:

**Հեռահաղորդակցության բնագավառը** հանձնաժողովի կարգավորման դաշտ ներգրավվելով 2006 թվականից, իր բազմաշերտ խնդիրներով ներկայումս հանձնաժողովի ուշադրության կիզակետում է: Այդ առումով 2007 թվականին հանձնաժողովը մեծածավալ աշխատանք է տարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործառույթներն իրականացնելու համար, մասնավորապես.

1. Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման համաշխարհային միտումները, հանձնաժողովը Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակել և հաստատել է էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը, որում, ելնելով հանրային շահերից, ամրագրվել են ոլորտի արդյունավետ զարգացման ուղղությունները և դրանց իրագործման ուղենիշները:
2. Կանոնակարգվել է նախկինում տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման լիցենզիա ստացած անձանց կարգավիճակը՝ տրված լիցենզիաները «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի պահանջներին պարզեցված և արագացված ընթացակարգով համապատասխանեցնելուց հետո հանձնաժողովի որոշմամբ այդ անձանց հնարավորություն է տրվել շարունակելու իրենց գործունեությունը:
3. Հաստատվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով հեռախոսային (ձայնային) ծառայություններ մատուցող օպերատորների կողմից հանրությանը տեղեկատվական ծառայության մատուցման ապահովման և բաժանորդների տեղեկատուների հրապարակման կանոնները:

Համաձայն այդ կանոնների, օպերատորը, տվյալ դեպքում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, պարտավոր է 2007 թվականի ընթացքում մշակել և տպագրել նշված տեղեկատուները: Ընդ որում, ընկերությունը պարտավոր է տեղեկատուներն անվճար տրամադրել Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հանրապետության տարածքում գործող բոլոր փոստային բաժանմունքներին, ինչպես նաև տեղադրել իր ինտերնետային կայքում:

Կանոններում ամրագրված են նաև դրույթներ բաժանորդների կողմից տեղեկատուներ ձեռք բերելու և հեռախոսով կապարվող հարցումների դեպքում տեղեկատուում ընդգրկված տեղեկատվության տրամադրման հնարավորության ապահովման վերաբերյալ:

4. Ձայնային ծառայությունների սահմանման վերաբերյալ հակասական մոտեցումները և տարակարծիք մեկնաբանությունները հստակեցնելու նպատակով հանձնաժողովի որոշմամբ դասակարգվել է ձայնային ծառայությունը:
5. Ելնելով ազգային անվտանգության և հանրային շահերից, հանձնաժողովի որոշմամբ բջջային կապի ծառայություններ մատուցող օպերատորներին պարտավորեցվել է հանրային շարժական բջջային կապի կանխավճարային հեռախոսաքարտերը հանրությանը տրամադրել միայն գրավոր պայմանագրի հիման վրա:
6. Հանձնաժողովի որոշմամբ «ԱրմենՏել» ՓԲԸ-ին պարտավորեցվել է մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը տեխնիկական հնարավորություններ ստեղծել՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր անալոգային բաժանորդային գծերով ավտոմատ կերպով կապարելու միջքաղաքային և միջազգային զանգեր:

Հաշվի առնելով, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերումից հետո «ՎիմպելԿոմ» ԲԲԸ-ն ասպիճանաբար պետք է հրաժարվեր «ԱրմենՏել» ՓԲԸ-ին վերապահված էլեկտրոնային հաղորդակցության տարբեր ծառայությունների մատուցման բացառիկ իրավունքներից, հանձնաժողովը 2006 թվականի վերջին հաստատել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ 60 լիցենզիայի փոփոխված տարբերակը, որտեղ վերացվել էր տվյալների հաղորդման միջազգային հասանելիության, ինչպես նաև GSM երկրորդ օպերատորի համար միջազգային ձայնային կապի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունքը, իսկ 2007 թվականի օգոստոս ամսին հաստատվել և «ԱրմենՏել» ՓԲԸ-ին է տրամադրվել 2007 թվականի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ մտնող թիվ 60 լիցենզիայի փոփոխված տարբերակը, որն ամբողջովին համապատասխանում է հեռահաղորդակցության ազատականացված շուկայի պահանջներին՝ առանց ծառայությունների մատուցման որևէ բացառիկ իրավունքի:

Միաժամանակ, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված ընկերությունների բնականոն գործունեությունն ապահովելու համար և հաշվի առնելով ազատականացված շուկայի առանձնահատկությունները, ընդունվել են որոշումներ, որոնցով հստակեցվել է բնագավառը կանոնակարգող իրավական դաշտը: Մասնավորապես, հաստատվել են և 2007 թվականի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ կմտնեն.

ա) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի և այլ օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի փոխկապակցման օրինակելի առաջարկը,

բ) Հայաստանի Հանրապետության համարագրման պլանը,

գ) համարների կամ կոդերի զբաղեցման թույլտվության հատկացման և օգտագործման կանոնները,

դ) այլ լիցենզավորված անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ելքային ձայնային ծառայությունների մատուցման կարգը:

Հաշվի առնելով 2007 թվականի կատարած աշխատանքները և ուսումնասիրելով այդ բնագավառի կարգավորման ուղղությամբ եվրոպական մի շարք երկրների առաջավոր փորձը, հանձնաժողովը նախատեսում է 2008 թվականի ընթացքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, շարունակել գործունեություն ծավալել հետևյալ ուղղություններով.

- հանրությանը հնարավորինս մատչելի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում մրցակցության զարգացում,
- լիցենզավորված անձանց՝ օրենսդրության և լիցենզիայի (թույլտվության) պահանջների կատարման ընթացքի մոնիթորինգ, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման և ցանցերի ոլորտում մրցակցության երաշխավորում և որևէ աղավաղման բացառում,
- սահմանափակ ռեսուրսների, ներառյալ՝ ռադիոհաճախականությունների փիրույթի և համարների արդյունավետ օգտագործման ապահովում,
- էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում գործունեություն ծավալելու ընթացակարգերի հնարավորինս պարզեցում,
- էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տեղական և արտերկյա ներդրումները խթանող իրավական դաշտի զարգացում,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների գործունեության որակի չափանիշների սահմանում, որոնք մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում ապահովելով արդար և արդյունավետ մրցակցություն, հնարավորություն կտան ասպիճանաբար մոտենալու հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում առաջատար դիրքեր զբաղեցնող երկրներին,
- մատուցվող ծառայությունների սպասարկման որակի չափանիշների սահմանում, որոնք հիմնված լինելով հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանրությանը սպասարկելու համաշխարհային լավագույն փորձի վրա, կնպաստեն

հանրապետությունում բնակչության սպասարկման որակի էական բարելավմանը:

Ելնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության նպատակներից, հանձնաժողովը դրանց իրագործման համար կօգտագործի լիցենզավորման, ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման, շուկայական մրցակցության պաշտպանության և ոլորտի առանձին հատվածների կարգավորման մեխանիզմները: Ընդ որում, այդ նպատակներն իրականացվելու են՝ հաշվի առնելով Առևտրի միջազգային կազմակերպության, Եվրոպական միության, Հեռահաղորդակցության միջազգային միության առաջարկներն ու կարգավորման ստանդարտները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության շուկայի առանձնահատկություններն ու առկա իրավիճակը:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորումը կիրականացվի հետևյալ ուղղություններով.

*ա) Շուկայի ուսումնասիրություն, որի համար՝*

- հանձնաժողովում կձևավորվի բնագավառում գործող էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միասնական տեղեկատվական բազա.
- ելնելով Հայաստանի Հանրապետության և հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում առաջատար դիրքեր զբաղեցնող երկրների էլեկտրոնային հաղորդակցության շուկաների համեմատական վերլուծության արդյունքներից, կնախանշվեն շուկայի զարգացման հիմնական ուղղությունները:

*բ) Լիցենզավորում (ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրում), որն իրականացվելու է՝*

- լիցենզավորման ընթացակարգերի պարզեցմամբ՝ լիցենզավորման համար նախատեսված պայմանների շրջանակը սահմանափակելով օրենքով սահմանված պայմանների նվազագույն ծավալով.
- մրցույթով կամ աճուրդով լիցենզիաների ստացման հնարավորության ընձեռմամբ:

*գ) Ռադիոհաճախականությունների փիրույթի կառավարում, որն իրականացվելու է՝*

- մշակելով ռադիոհաճախությունների փիրույթի արդյունավետ օգտագործման ճկուն քաղաքականություն,
- սահմանելով ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման ողջամիտ վճարներ,

- պարզեցնելով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը,
- ռադիոհաճախականությունների փիրույթի ազատականացմամբ (կոնվերսիա), որը կնպաստի էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների իջեցմանը և բնագավառում նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

*դ) Շուկայական մրցակցության պաշտպանության ապահովում.*

Պարբերաբար կկատարվեն հետազոտություններ՝ էլեկտրոնային հաղորդակցության շուկայում մրցակցային իրավիճակը գնահատելու և հնարավոր հակամրցակցային երևույթները բացահայտելու և դրանք վերացնելու նպատակով:

*ե) Համընդհանուր (ունիվերսալ) ծառայությունների ապահովում, որի համար նախատեսվում է՝*

1) մանրամասն ուսումնասիրել էլեկտրոնային հաղորդակցության շուկայի (բնակչության մասնավոր և հանրային հատվածի) կարիքները՝ համընդհանուր ծառայությունների արդյունավետ մոդել մշակելու նպատակով.
2) սահմանել համընդհանուր ծառայությունների մատուցման լիցենզավորման կամ լիցենզիաներում որպես պարտավորություն ամրագրելու պայմանները.
3) աշխատանքներ տանել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն համընդհանուր ծառայությունների հիմնադրամ ստեղծելու ուղղությամբ, որին էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողները պետք է մասհանումներ կատարեն:

Լիցենզիաների պայմանների կատարման ընթացքին հետևելու համար 2008 թվականի ընթացքում հանձնաժողովը պարբերաբար ուսումնասիրություններ կիրականացնի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի լիցենզավորված ընկերություններում: Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր անալոգային բաժանորդային գծերով ավտոմատ կերպով միջքաղաքային և միջազգային զանգեր կատարելու՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի պարտավորության կատարման ընթացքը գնահատելու նպատակով: Հայաստանի Հանրապետության հետագա զարգացումը մեծապես պայմանավորված է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչը ուղղակիորեն ենթադրում է հաղորդակցության որակյալ ենթակառուցվածքի առկայություն և, մասնավորապես, ինտերնետ հասանելիություն: Այս առումով 2008 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինի հանրապետությունում ինտերնետ հասանելիության ծառայության բարելավման հարցը, ինչի համար նախատեսվում է արագագործ ինտերնետային ծառայություն մատուցելու հնարավորությունների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում: Հանձնաժողովի

կողմից կիրախուսվեն ընկերությունների բոլոր այն նախաձեռնությունները, որոնք միտված կլինեն տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

«ԱրմենՏել» և «Կ-Տելեկոմ» ՓԲԸ-ների մրցակցության արդյունքում 2007 թվականին անհամեմատ բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը. արդեն հանրությանը մատուցվում են նոր ծառայություններ, մասնավորապես, GPRS (տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ընձեռում), կանխավճարային քարտերով մատուցվող ծառայություններ, միջազգային ռոումինգ, MMS (մուլտիմեդիա հաղորդագրությունների ծառայություններ) և այլն: Էլեկտրոնային հաղորդակցության շուկայում նկատվում են շարժական կապի սակագների նվազման և հեռախոսային կապի ծավալների (տրաֆիկ) աճի հստակ միտումներ: Հանձնաժողովն իր գործունեությամբ կնպաստի վերոհիշյալ միտումների շարունակական աճին նաև 2008 թվականի ընթացքում, ինչպես նաև համապարփակ ուսումնասիրություններ կիրականացնի բջջային կապի երրորդ օպերատորի բջջային կապի շուկա մուտք գործելու հնարավորությունների և դրանով պայմանավորված՝ շուկայի կառուցվածքի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

Հետևելով գիտատեխնիկական առաջընթացի համաշխարհային միտումներին և նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես անհրաժեշտություն կառաջանա անցնելու նոր սերնդի ցանցերի (NGN- Next Generation Networks) ներդրմանը, 2008 թվականին հանձնաժողովը կսկսի այդ ցանցերի շահագործման հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը, հատկապես կարևորելով ամրակցված ցանցերի զարգացման և ցանցերի փոխկապակցման խնդիրները՝ կապված IP արձանագրությամբ կատարվող տեղեկատվական և ձայնային (VoIP) ծառայությունների մատուցման հետ:

Բջջային կապի և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լայնաշերտ ծառայությունների մատուցման (broadband) համաշխարհային զարգացումներով պայմանավորված՝ հանձնաժողովը կարևորում է 2008 թվականի ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լայնաշերտ ծառայությունների մատուցման և բջջային կապի 3-րդ սերնդի ցանցերի (3G ստանդարտ) ներդրման համար բարենպաստ պայմաններ և այդ ծառայությունների մատուցման համար նպաստավոր իրավական դաշտ ստեղծելու աշխատանքները: 3G ստանդարտի ներդրմամբ բջջային ցանցերի բաժանորդները հնարավորություն կունենան շատ բարձր արագագործություն ունեցող համակարգի միջոցով ստանալ ծառայությունների ավելի մեծ տեսականի՝ տեղեկատվական հոսքերի հսկայական ծավալներով:

Նոր սերնդի ցանցերի ներդրման հետ կապված՝ առաջին պլան կմղվի տարբեր կառուցվածք և տարբեր տեխնոլոգիական կատարում ունեցող ցանցերի հատկանիշների համընկնման (կոնվերգենցիա) խնդիրը՝ նոր տեխնոլոգիաների

մուտքով կխորանան փոխկապակցման խնդիրները: Հանձնաժողովը պետք է պատրաստ լինի զարգացումների հետագա ընթացքին և իր իրավասությունների շրջանակում մշակի կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որպեսզի նոր սերնդի ցանցերի մուտքը շուկա բացասական ազդեցություն չգործի դեռևս կայացման փուլում գտնվող շուկայական հարաբերությունների վրա:

2008 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինեն սպառողների և լիցենզավորված անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև մատուցված ծառայությունների որակի հարցերը:

**Էներգետիկայի բնագավառի** կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ ևս հանձնաժողովը 2007 թվականին մշակել և հաստատել է մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգը,

բ) մատակարարի և սպառողի (բացառությամբ բնակիչների) օպերատիվ փոխհարաբերությունների կարգը,

գ) էլեկտրական էներգիայի մատակարարման մատակարար-սպառող (բնակչություն), մինչև 6(10)կՎ սպառողներ (բացառությամբ բնակչության), 6(10)կՎ և բարձր լարման սպառողներ (բացառությամբ բնակչության) պայմանագրերի օրինակելի ձևերը:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի շրջանակում, Եվրախորհրդարանի և Եվրախորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի «Էներգիայի ներքին շուկայում ջերմության օգտակար պահանջարկի հիման վրա համակցված արտադրության խրախուսման և N92/42/EEC դիրեկտիվում փոփոխություններ կատարելու մասին» N2004/8/EC դիրեկտիվին համահունչ, հանձնաժողովը 2007 թվականին մշակել է օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիա) սակագների սահմանման սկզբունքները, այդ համակարգերի համար էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկան, ինչպես նաև սահմանել է համակցված արտադրության տեղակայանքներից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունն ու էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) ցուցանիշները:

Նշված որոշումները համալրում են անհրաժեշտ նորմատիվային դաշտը՝ «Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման համակարգերի վերականգնման

առաջնեկային ծրագրերի մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն Երևանի Ավան և Դավիթաշեն համայնքներում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման առաջնեկային ծրագրերն իրագործելու համար:

Անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել վերականգնվող էներգառեսուրսներ օգտագործող ինքնավար արտադրողների միկրոէլեկտրակայանների և էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի կարգում, որոնց արդյունքում կարգի գործողությունը տարածվում է նաև համակցված ցիկլով էլեկտրական և ջերմային էներգիա ինքնավար արտադրողների վրա:

2007 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել հանձնաժողովի կողմից 2006 թվականի դեկտեմբեր ամսին հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, որոնցով ի թիվս այլ հարցերի սահմանվել են սպառողների սպասարկման որակին վերաբերող պահանջներ՝ էլեկտրամատակարարման ընդհատման, դադարեցման և սահմանափակման պայմանները, դադարեցումից հետո սպառողների էլեկտրամատակարարման վերականգնման ընթացակարգը, արտապլանային ընդհատումներից հետո սպառողների էլեկտրամատակարարման վերականգնման դիֆերենցված ժամկետները: Հստակեցվել և որոշակիորեն ընդլայնվել է էլեկտրամատակարարող ընկերության սպասարկման տիրույթը և ավելացել են սպառողների սպասարկման օրերը, ինչպես նաև խստացվել են այդ ծառայությունների մատուցման ընթացակարգերի և ժամկետների վերաբերյալ պահանջները: Կանոններով սահմանվել է նաև մատակարարի պարտավորությունը՝ ապահովել շուրջօրյա հեռախոսակապ, որի միջոցով սպառողները կարողանան տեղեկություն հաղորդել իրենց դիմում-բողոքների և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման դադարեցումների պատճառների, վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրաէներգիայի արժեքի, քանակության, վճարման ժամկետների, մատակարարի և սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:

2008 թվականին կշարունակվեն էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես, հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների մաս կազմող կարգերի կիրարկման ընթացքում առաջ եկած խնդիրները, կլրամշակվեն՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը,

բ) էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ

փոխհարաբերությունների կարգը:

Բացի այդ, 2008 թվականի ընթացքում հանձնաժողովը կշարունակի էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների կիրարկման համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև սահմանված պահանջների կատարման հսկողությունն իրականացնելու համար մատակարարից ստացվող տեղեկատվական ձևերի լրամշակումը:

Բնական գազի մատակարարման և օգտագործման գործող կանոնների որոշ դրույթների կիրարկումն ապահովելու համար հանձնաժողովի կողմից դրանք պարզաբանելու կամ մեկնաբանելու անհրաժեշտություն է առաջացել: Որոշ խնդիրներ են առաջացել նաև հանրապետությունում իրականացվող գազիֆիկացման ընթացքում, որոնց լուծումը պայմանավորված է գազիֆիկացման ընթացակարգերում մատակարարի և սպառողների պարտավորությունների և իրավունքների հստակեցմամբ, և այդ առումով նախատեսվում է 2008 թվականին լրամշակել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները՝ հստակեցնելով բազմաբնակարան շենքերի բնակարանների և կազմակերպությունների գազիֆիկացման ընթացակարգերը, սահմանելով սպառողների սպասարկման որակի ապահովմանն ուղղված մատակարարին ներկայացվող պահանջները:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող՝ «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների մշակման աշխատանքներին: Միաժամանակ, հանձնաժողովը մասնակցել է նաև «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի մշակման աշխատանքներին: 2008 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի կարգավորման բնագավառի օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

## *2. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում*

Հանձնաժողովը 2007 թվականին շարունակել է կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման գործընթացը:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան, 2007 թվականին երկարաձգվել են «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-

ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների գործողության ժամկետները:

2007 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը հանձնաժողովը տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման 19 և փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության 10 լիցենզիա:

2008 թվականին կշարունակվի լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման գործընթացը՝ կատարելագործելով կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռման, նրանց համար գործունեության միատեսակ պայմանների ապահովման մեխանիզմները:

2007 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը հանձնաժողովն ապահովել է կարգավորվող ընկերությունների կողմից 1 592.1 մլն դրամ գումարի փոխանցումը ՀՀ պետական բյուջե, մասնավորապես.

ա) էներգետիկայի բնագառավառում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից վճարված տարեկան պետական տուրքերի գումարներից՝ 136.9 մլն դրամ,

բ) հեռահաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից վճարված տարեկան պետական տուրքերի գումարներից՝ 6.1 մլն դրամ,

գ) հեռահաղորդակցության բնագավառում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարներից՝ 1 408.2 մլն դրամ,

դ) էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հանձնաժողովի կողմից կիրառված ֆինանսական տույժերի գումարներից՝ 40.9 մլն դրամ:

Վերը նշված աղբյուրներից 2007 թվականին ՀՀ պետական բյուջե փոխանցված ընդհանուր գումարը մինչև տարեվերջ կկազմի շուրջ 3,2 մլրդ դրամ:

2008 թվականին հանձնաժողովը կշարունակի տարեկան պետական տուրքերի և ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գանձման ապահովման գործընթացը: Ներկայիս կանխատեսումներով նշված աղբյուրներից 2008 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կգանձվի շուրջ 2, 2 մլրդ դրամ:

## *3. Սակագնային քաղաքականություն*

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է բնագավառի կարգավորվող ընկերությունների բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, սպառողների և ընկերությունների

շահերի հավասարակշռմանը:

«Սևան-Հրազդանյան կասկադ» ՓԲԸ-ի գույքային համալիրը «RAO NORDIC» ընկերությանը փոխանցելու վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ «Սևան-Հրազդանյան կասկադ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը պետք է ապահովեր 25 մլն ԱՄՆ դոլարի վերադարձը ոչ ուշ, քան 5 տարվա ընթացքում: Վերջին տարիներին ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ինչպես նաև կայանից փաստացի առաքված էլեկտրաէներգիայի աճը հնարավորություն ընձեռեցին 25 մլն ԱՄՆ դոլարի վերադարձն ապահովել նախանշված ժամկետից շուտ՝ 2007 թվականի մայիս ամսին: Հաշվի առնելով այս հանգամանքը, հանձնաժողովը վերանայել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) սակագները:

Հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի համար հաստատված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, համաձայն որոնց 2008 թվականի հունվարի 1 -ից սակագնի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունը նվազեցվելու է մինչև 13%, ինչպես նաև հիմք ընդունելով էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները և ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու իրականացրած կապիտալ ներդրումների վերլուծության արդյունքները, հանձնաժողովը մինչև սույն թվականի դեկտեմբերի 1 -ը կճշգրտի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գործող սակագնային մարժայի մեծությունը: Համապատասխանաբար կվերանայվեն նաև արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները:

Հանձնաժողովը 2007 թվականին հաստատել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման նոր մեթոդիկան, հաշվի առնելով վերջին տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի տատանումները: Նշված մեթոդիկայի համաձայն՝ 2008 թվականի և դրան հաջորդող տարիների համար կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները կճշգրտվեն հաշվարկային բանաձևով, որը թույլ կտա հաշվի առնել ոչ միայն դրամի փոխարժեքի տատանման, այլ նաև սղաճի ազդեցությունը: Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման գործընթացը շարունակական բնույթ է կրում և իրականացվում է յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 1 -ը:

Յուրաքանչյուր տարի՝ մինչև տարեվերջ, հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում և հաստատվում են երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող

պայմանագրային և փնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ մինչև ընթացիկ տարվա ավարտը նախատեսվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2008 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

2007 թվականի փետրվար ամսին «Երևան Ջուր» ՓԲԸ-ն սակագների ճշգրտման առաջարկով դիմել է հանձնաժողով՝ հիմք ընդունելով բազիսային սակագների ճշգրտման սահմանված մեթոդաբանությունում ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, եվրո / դրամ փոխարժեքի և վարձակալ ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ՝ հաշվարկային տարում տեղի ունեցած փոփոխությունների՝ ընկերության գնահատականները: Մանրածախ ջրամատակարարման ծավալների՝ ընկերության գնահատականների հիմնավորվածությունն ուսումնասիրելու նպատա-կով ստեղծված համատեղ աշխատանքային խմբի կատարած ծավալուն մոնիթորինգի և վերլուծության արդյունքների հիման վրա, ընկերության կողմից ներկայացված 2006 թվականի մանրածախ ջրամատակարարման ծավալները ավելացել են շուրջ 4.73 մլն խորանարդ մետրով: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, հաձնաժողովն ընկերության առաջարկած 7.6 դրամի (առանց ԱԱՀ -ի) փոխարեն սակագնի ճշգրտման ընդունելի մեծություն է համարել 3 դրամը (առանց ԱԱՀ -ի): Սպառողների համար կայուն սակագնային քաղաքականություն իրականացնելու նկատառումով հանձնաժողովի և ընկերության փոխադարձ համաձայնությամբ համապատասխան փոփոխություն կատարելով «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմաններում, որոշվել է սակագնի ճշգրտման մեծություն համարվող 3 դրամը հավելել ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման 2009 թվականի բազիսային սակագնին: Հաշվի առնելով շարադրվածը, հանձնաժողովը վերահաստատել է «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման գործող սակագները:

Ելնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, եվրո / դրամ փոխարժեքի և վարձակալ ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների 2007 թվականի փաստացի գնահատականներից, 2008 թվականին կվերանայվեն «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

«Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններով (շահագործվող հիմնական միջոցների փոփոխություններով)

պայմանավորված՝ ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում վերանայվել են «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Որոտան-Արփա-ջրառ» և «Դեբեդ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին վաճառվող ինքնահոս և մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի սակագները:

Ընթացիկ տարում հանձնաժողովը մեծածավալ աշխատանքներ է կատարել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների կարգավորման ուղղությամբ: Լրամշակվել են հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը: Համագործակցելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ՝ լրամշակվել են ընկերության կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների սակագների սահմանման ու ճշգրտման համար ներկայացվող ծախսումների փորմատի ձևերը: Մինչև տարեվերջ նախատեսվում է քննարկել և հաստատել ընկերության կողմից սահմանված ծախսումների բաշխման մեթոդաբանությունը:

2007 թվականին «ԱրմենՏել» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու հեռահաղորդակցության բնագավառում ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների սակագները: Առաջարկվող սակագնային ճշգրտումների հիմնավորվածությունն ուսումնասիրելու նպատակով կազմակերպվել են մանրակրկիտ քննարկումներ, պահանջվել է ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ: Հանձնաժողովը բավարար հիմնավորված չհամարելով ծախսային որոշ հոդվածների առաջարկվող ճշգրտումը, համապատասխան որոշմամբ մերժել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի առաջարկությունը, որից հետո հանձնաժողովի և ընկերության միջև սկսվել է սակագների ճշգրտման վերաբերյալ համաձայնության ձեռքբերման բանակցային գործընթացը: Արդյունքում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ, առաջարկել է իր կողմից բացառիկ իրավունքով մատուցվող հիմնական և ոչ հիմնական ծառայությունների գործող սակագները թողնել անփոփոխ՝ դրանք համարելով առավելագույն և վերահավասարակշռված սակագներ, որոնք համապատասխան որոշմամբ ընդունվել են հանձնաժողովի կողմից:

2007 թվականի ապրիլ ամսին ընդունված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2007 թվականի մայիս ամսից փոստային կապի բնագավառը ներառվել է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտների շարքում: Ներկայումս աշխատանքներ են տարվում փոստային կապի համընդհանուր ծառայությունների սակագների սահմանման և վերանայման կարգի, ինչպես նաև «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների կարգի և

ձևերի մշակման ուղղությամբ, որոնք նախատեսվում է ավարտել մինչև տարեվերջ:

### *4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն*

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, լինելով հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա գնահատել ոչ միայն ընկերությունների, այլև տվյալ բնագավառի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը, ինչպես նաև սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման, լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական տվյալների բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման բնագավառներում ենթահաշիվների համակարգի ներդրման՝ հանձնաժողովի փորձը, աշխատանքներ են տարվում ջրային համակարգի ընկերություններում 2008 թվականի հունվարի 1-ից ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ:

Նշված աշխատանքներն էապես կնպաստեն կարգավորվող ընկերությունների ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2008 թվականին:

Ջրային համակարգի ընկերություններում ենթահաշիվների համակարգ ներդնելու հետ կապված՝ նախատեսվում է լրամշակել հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

2008 թվականի ընթացքում աշխատանքներ կտարվեն նաև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համար ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը շարունակելու է իր ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

2008 թվականին կշարունակվեն աշխատանքներն ինչպես սակագների սահմանման, այնպես էլ գործող սակագնային քաղաքականությանը վերաբերող մեթոդաբանությունների և ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերի լրամշակման և արդիականացման ուղղությամբ: Մասնավորապես, ելնելով էլեկտրական էներգիայի պահանջարկից և էլեկտրական էներգիայի արտադրության կառուցվածքից՝ կվերանայվեն էլեկտրաէներգետիկ համակարգի ներհամակարգային սակագները: Աշխատանքներ կտարվեն նաև սակագների հաշվարկման և վերանայման գործող մեթոդաբանությունների լրամշակման ուղղությամբ, որոնք կնպաստեն հանձնաժողովի կողմից վարվող սակագնային քաղաքականությունն առավել հստակ և թափանցիկ, իսկ սակագնային համակարգը՝ ավելի արդարացի ու տնտեսապես հիմնավորված դարձնելուն:

## *5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում*

2008 թվականին հանձնաժողովը կշարունակի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության կենթարկվեն նրանց 2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և կհրապարակվեն համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Կշարունակվեն նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկողության աշխատանքները:

2008 թվականին կշարունակվեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացում նոր գնահատման չափանիշների ներդրմանն ուղղված աշխատանքները, որոնք սկսվել են դեռևս 2004 թվականին, երբ ստեղծվեցին սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվական առաջին բազաները, որոնք, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվում են հանձնաժողովի վեբ կայքում: Հաշվի առնելով առկա տեղեկատվական բազաների աստիճանաբար աճող ծավալները և դրանց համակողմանի վերլուծության անհրաժեշտությունը, 2008 թվականին նախատեսվում է

ներդնել նոր ծրագրային փաթեթ, որը թույլ կտա վեր հանել բաշխիչ ցանցերում առավելապես թույլ և հաճախակի խափանվող օղակները և ընկերության կողմից իրականացնել հասցեավորված ներդրումներ յուրաքանչյուր պարածաշրջանի յուրաքանչյուր բնակավայրի համար:

2006 թվականին հանձնաժողովն արդեն իսկ սահմանել է սպառողների հոսանքազրկումների քանակի և փևողության, սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և փևողության բազիսային ցուցանիշները և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2007-2009 թվականի ներդրումային ծրագրում առաջին անգամ ամրագրվել են նշված ցուցանիշների ծրագրային մեծությունները: 2008 թվականին կլրամշակվեն սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձևերը և բազիսային ցուցանիշներ կսահմանվեն նաև լարման տարբեր մակարդակների սպառողական խմբերի համար: Բացի այդ, 2008 թվականին ընկերության ներդրումային գործունեության արդյունքները հանձնաժողովի կողմից կգնահատվեն սպասարկման որակի ցուցանիշների ծրագրային մեծությունների ապահովման տեսանկյունից:

Նպատակ ունենալով բնական գազի մատակարարման համակարգում ապահովել սպառողների առավել անվտանգ սպասարկում և հաշվի առնելով այս ուղղությամբ մատակարարի կողմից տարվող աշխատանքների արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը, 2006 թվականին հաստատվել են բնական գազի մատակարարման համակարգում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը: Ստեղծվող տեղեկատվական բազան թույլ կտա սահմանել սպասարկման որակի բազիսային ցուցանիշներ և հետագայում վերահսկել դրանց պահպանումը: Տեղեկատվական բազայի ձևավորման և դրա հավաստիության ապահովման համար 2006-2007 թվականների ընթացքում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած տվյալների ուսումնասիրության հիման վրա հանձնաժողովը 2007 թվականին լրամշակել է տեղեկատվության օրինակելի ձևերը:

2008 թվականի ընթացքում կշարունակվի տեղեկատվական բազայի ձևավորման գործընթացը:

Հանձնաժողովը քայլեր է ձեռնարկում նաև ջրամատակարարման ոլորտում սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ: Դեռևս 2006 թվականին մշակվել և հաստատվել են խմելու ջուր մատակարարող ընկերություններում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների և հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը՝ սկիզբ դնելով այդ ցուցանիշների սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվական բազաների ձևավորման գործընթացին: 2007 թվականին «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի»,

«Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Երևան Ջուր» ՓԲԸ-ներում իրականացվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների ներդրման և 2006-2007 թվականների ընթացքում ընկերություններից ստացված տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա նախատեսվում է լրամշակել խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների և դրանց վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը: 2008 թվականին հանձնաժողովը կշարունակի ջրային ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրության գործընթացը:

Սկսած 2008 թվականից, խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր տարի հանձնաժողովի հաստատմանը կներկայացնեն սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: 2007 թվականին այդ նպատակով հանձնաժողովի կողմից մշակված և ներդրված նոր իրավական մեխանիզմները սահմանում են հստակ կանոններ, որոնք թույլ կտան հետագայում խմելու ջուր մատակարարող ընկերությունների գործունեությունն առաջին հերթին նպատակաուղղել առավել կարճ ջրամատակարարում ունեցող սպառողների ջրամատակարարման տևողության բարելավմանը, ինչը հնարավորություն չեն տալիս ապահովել ջրամատակարարման տևողության գնահատման միջինացված ցուցանիշները:

Իրականացվող ներդրումների, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովը մի շարք կարգավորվող ընկերությունների համար հաստատել է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կարգեր: Այս գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ուսումնասիրում է ընկերությունների կողմից կատարված տարեկան գնումները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, 2007 թվականին ներդրվել են ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների նոր ձևեր, որոնք թույլ են տալիս վերլուծել և համադրել ընկերությունների իրականացրած ցանկացած գործարք:

2008 թվականին նախատեսվում է էապես կատարելագործել նաև գործող գնումների կարգերը՝ առավելագույնս մեծացնելով կարգավորվող ընկերությունների պատասխանատվությունն արդյունավետ գնումների իրականացման համար անհրաժեշտ գործընթացների կազմակերպման և ապահովման առումով: Այս պարագայում հանձնաժողովը, սահմանափակելով կարգավորման շրջանակները, իրեն կվերապահի գնումների գործընթացին առաջադրվող հիմնական սկզբունքների

սահմանումը, միաժամանակ կապարելագործելով կապարված փաստացի գնումների մոնիթորինգի վերլուծության և գնահատման մեխանիզմների սահմանումը:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր փարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն տեմպերի մասին: 2007 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 57 փոքր հիդրոէլեկտրակայաններ, և 58-ը գտնվում են կառուցման փուլում: Այժմ գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 74 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 237 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 144 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 527 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, ներկայիս տվյալներով 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում կգործեն 115 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 218 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 764 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը կազմում է այսօրվա սպառման ծավալների գրեթե 18%-ը:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2007 թվականին, մինչև սեպտեմբերի 1-ը լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու կամ դրանց համապատասխան փորձաքննություններ անցած նախագծերը չներկայացնելու համար հանձնաժողովը կայացրել է 18 որոշում՝ 12 ընկերությունների ֆինանսական պատասխանատվության ենթարկելու և 36,2 մլն դրամ պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ:

2008 թվականին հանձնաժողովը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի զարգացման տեմպերն պահպանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, իսկ իրենց պարտավորությունները պատշաճ կերպով չկատարող ընկերությունների նկատմամբ կշարունակվեն կիրառվել համապատասխան տույժեր:

## *6. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում*

Վերլուծելով 2006 թվականին և 2007 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2007 թվականին սպասվող և 2008 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2008 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում մուտք գործող էլեկտրական էներգիայի ծավալի աճ գրեթե չի նախատեսվում: Մինչդեռ, գերնորմատիվային կորուստների նվազման արդյունքում բաշխիչ ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվեգրված սպառումը կավելանա շուրջ 2.4% -ով:

2008 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ատոմային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 43.21% (2007 թվականին սպասվում է 46.02%), ջերմային էլեկտրակայաններինը՝ 24.05% (2007 թվականին սպասվում է 22.65%), հիդրոէլեկտրակայաններինը՝ 32.7% (2007 թվականին սպասվում է 31.29%) և հողմային էլեկտրակայանինը՝ 0.04%:

Երկրորդ աղյուսակում տրված են բնական գազի 2007 թվականին սպասվող և 2008 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները: Ըստ կանխատեսման, 2008 թվականին 2007 թվականի համեմատությամբ սպառողներին առաքվող բնական գազի ծավալը կաճի շուրջ 5.24%-ով, իսկ բնակչությանը մատակարարվող բնական գազի ծավալը՝ շուրջ 9.8%-ով:

Երրորդ աղյուսակում տրված են ջերմամատակարարման և արդյունաբերական կարիքների համար ջերմային էներգիայի 2007-2008 թվականների կանխատեսվող հաշվեկշիռները: 2008 թվականին 2007 թվականի համեմատությամբ 11.7% -ով կավելանա արդյունաբերական կարիքների համար «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ –ից առաքվող ջերմային էներգիայի ծավալը:

Աղյուսակ №1

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2007-2008 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

| | Ցուցանիշի անվանումը | Չափի միավոր | **2007 թ.** սպասվող | **2008 թ.** կանխա-տեսվող |
|---|---|---|---|---|
| 1 | **Էլեկտրաէներգիայի արտադրություն** | մլն կՎտժ | **5704.5** | **5704.0** |
| 1.1 | այդ թվում՝ **ՀԱԷԿ** | "-" | 2625.0 | 2465.0 |
| 1.2 | **ՀԷԿ-եր** | "-" | 1785.0 | 1865.0 |
| 1.2.1 | որից՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ | "-" | 500.0 | 450.0 |
| 1.2.2 | «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ | "-" | 1020.0 | 1150.0 |
| 1.2.3 | Ձորա ՀԷԿ | "-" | 75.0 | 65.0 |
| 1.2.4 | Մասնավոր փոքր ՀԷԿ-եր | "-" | 190.0 | 200.0 |
| 1.3 | **«Լոռի-1» հողմային էլեկտրակայան** | "-" | 2.5 | 2.5 |
| 1.4 | **ՋԷԿ-եր** | "-" | 1292.0 | 1371.5 |
| 1.4.1 | որից՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ | "-" | 932.0 | 1010.5 |
| 1.4.2 | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | "-" | 360.0 | 361.0 |
| 2 | **Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար** | մլն կՎտժ | 371.5 | 333.5 |
| 2.1 | Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ | % | 6.51% | 5.85% |
| 3 | **Առաքում կայաններից** | մլն կՎտժ | **5333.0** | **5370.5** |
| 3.1 | այդ թվում՝ մասնավոր փոքր ՀԷԿ-երից | մլն կՎտժ | 184.3 | 194 |
| 4 | **Ներհոսք** | մլն կՎտժ | 233.0 | 172.5 |
| 5 | **Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրացանցեր (տող3-տող3.1)** | մլն կՎտժ | 5148.7 | 5176.5 |
| 6 | **Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում** | մլն կՎտժ | 80.0 | 90.0 |
| 6.1 | Նույնը՝ %-ով տող 5-ի նկատմամբ | % | 1.55% | 1.74% |
| 7 | **Արտահոսք** | մլն կՎտժ | 237.0 | 170.0 |
| 8 | **Մուտք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, ընդամենը (տող3+տող4-տող6-տող7)** | մլն կՎտժ | **5249.0** | **5283.0** |
| 8.1 | որից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար | "-" | 153.0 | 161.0 |
| 8.2 | Ներքին շուկայում սպառման համար | "-" | 5096.0 | 5122.0 |
| 9 | **Կորուստները բաշխիչ ցանցերում** | մլն կՎտժ | 745.0 | 665.9 |
| 9.1 | Նույնը՝ %-ով տող 8-ի նկատմամբ | % | 14.62% | 13.0% |
| 10 | **Ներքին սպառում** | մլն կՎտժ | **4351.0** | **4456.1** |

## ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2007-2008 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

| | Ցուցանիշի անվանումը | Չափի միավոր | **2007 թ.** սպասվող | **2008 թ.** կանխա-տեսվող |
|---|---|---|---|---|
| 1 | **Բնական գազի ներկրում** | մլն ն մ $^3$ | **2044.0** | **2150.0** |
| 2 | **Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում** | մլն ն մ $^3$ | 140.0 | 150.0 |
| 2.1 | Նույնը՝ %-ով փող 1-ի նկատմամբ | % | 6.85% | 6.98% |
| 3 | **Գազի ծախսը սեփական կարիքների համար** | մլն ն մ $^3$ | 12.0 | 12.0 |
| 3.1 | Նույնը՝ %-ով փող 1-ի նկատմամբ | % | 0.59% | 0.56% |
| 4 | **Մղվել է ստորգետնյա պահեստարաններ** | մլն ն մ $^3$ | 60.0 | 60.0 |
| 5 | **Բնական գազի առաքումը սպառողներին** որից՝ | "-" | **1832.0** | **1928.0** |
| 5.1 | Ջերմային էլեկտրակայաններ | "-" | 460.0 | 490.0 |
| 5.2 | Արդյունաբերություն | "-" | 410.0 | 420.0 |
| 5.3 | Բյուջետային կազմակերպություններ | "-" | 38.8 | 40.8 |
| 5.4 | Բնակչություն | "-" | 533.0 | 585.0 |
| 5.5 | Կենտրոնացված ջեռուցման համակարգ | "-" | 0.2 | 0.2 |
| 5.6 | Այլ սպառողներ | "-" | 390.0 | 392.0 |

Աղյուսակ №3

**ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2007-2008 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ**

| | Ցուցանիշի անվանումը | Չափի միավոր | 2007թ. սպասվող | 2008 թ. կանխա-տեսվող |
|---|---|---|---|---|
| 1 | **Ջերմային էներգիայի արտադրությունը,** այդ թվում՝ | հազ ԳՋ | **1976.14** | **2272.28** |
| 1.1 | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | "-" | 1792.14 | 2072.28 |
| 1.2 | «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ | "-" | 184.0 | 200.0 |
| 2 | **Ջերմային էներգիայի կորուստները,** այդ թվում՝ | հազ ԳՋ | 119.05 | 155.36 |
| 2.1 | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | "-" | 119.05 | 155.36 |
| 2.2 | «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ | "-" | | |
| 3.0 | **Ջերմային էներգիայի օգտակար առաքումը,** այդ թվում՝ | հազ ԳՋ | **1857.09** | **2116.92** |
| 3.0.1 | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | "-" | 1673.09 | 1916.92 |
| 3.0.2 | «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ | "-" | 184.0 | 200.0 |
| 3.1 | *Ջեռուցման համար** որից՝ | "-" | 209.59 | 276.78 |
| 3.1.1 | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | "-" | 25.59 | 76.78 |
| 3.1.2 | «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ | "-" | 184.0 | 200.0 |
| 3.2 | *Արդյունաբերական կարիքների համար* | "-" | 1647.5 | 1840.1 |
| 3.2.1 | «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ | "-" | 1647.5 | 1840.1 |

* Ջերմային էներգիան օգտագործվում է էլեկտրակայանների սեփական կարիքների համար:

### *7. Սպառողների հետ տարվող աշխատանքներ*

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ համապատասխան օրենքներով, անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

Կարգավորվող անձանց հետ համատեղ, հասարակական կազմակերպությունների ու սպառողների մասնակցությամբ, պարբերաբար քննարկումներ են կազմակերպվում սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Հանձնաժողովի համապատասխան ծառայությունը 2007 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ստացել է 102 գրավոր բողոք, «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 453 բողոք և հարցադրում, որոնցում բարձրացված բոլոր խնդիրներին համապատասխան ընթացք է տրվել: Քննարկումների շրջանակներում, հարցերն ավելի մանրամասն ուսումնասիրելու նպատակով, կատարվել է 17 ստուգայց:

Սպառողներին ավելի մանրամասն իրազեկելու նպատակով 2007 թվականին «Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասրակական կազմակերպության հետ համատեղ հանձնաժողովի կողմից կարգավորվող ոլորտների մի մասի վերաբերյալ մշակվել և հրապարակվել են սպառողների իրավունքների ու պարտավորությունների մասին բրոշյուրներ: 2008 թվականին նախատեսվում է տպագրել և անհատույց տարածել բրոշյուրներ նաև մյուս ոլորտների վերաբերյալ:

2008 թվականին մարզպետարանների հետ համատեղ կշարունակվեն աշխատանքները մարզերի բնակչության հետ կապը բարելավելու, էլեկտրոնային փոստով հաղորդակցվելու և հանրային ծառայությունների վերաբերյալ սպառողների դիմումներին, առաջարկություններին կապի այս միջոցով ընթացք տալու ուղղությամբ:

Կշարունակվի հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը ՀՀ օրենքների և իրավական ակտերի մասին սպառողներին իրազեկելու և պարզաբանելու նպատակով կազմակերպվող հեռուստատեսային հաղորդումներին:

### *8. Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ*

2008 թվականին ևս հանձնաժողովը ջանքեր կգործադրի թափանցիկ և հրապարակային գործունեության, զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության ճանապարհով նպաստելու հանրության իրազեկության աստիճանի բարձրացմանը, յուրաքանչյուր քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացմանը:

Հանձնաժողովի ինտերնետային կայքում, նաև թերթերով, էլեկտրոնային լրատվամիջոցներով կծանուցվի հանձնաժողովի նիստերի մասին, իսկ դրանց ավարտից հետո կմեկնաբանվեն ընդունված որոշումները, լրագրողների համար

կկազմակերպվեն ճեպազրույցներ: Հանրային ծառայությունների ոլորտը լուսաբանող՝ հանձնաժողովում հավատարմագրված լրագրողների համար ինչպես նախկինում, այսուհետ ևս կկազմակերպվեն սեմինարներ, որոնք կնպաստեն կարգավորվող ոլորտների և հանձնաժողովի գործունեության մասին լիարժեք տեղեկատվական բազայի ստեղծմանը, և արդյունքում զգալիորեն կբարելավվեն ԶԼՄ-ների կողմից հանրությանը ներկայացվող անաչառ և բովանդակային վերլուծությամբ նյութերի որակն ու մակարդակը:

Հանձնաժողովի նախագահը, անդամները, աշխատակազմ մասնագետները հանձնաժողովի գործառույթների, իրավասությունների, հասարակական հնչեղություն ունեցող որոշումների ու խնդիրների շուրջ տարբեր հեռուստաընկերություններով, հանրային ռադիոյով, լրատվական գործակալություններով, օրաթերթերում պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Նպատակ ունենալով էլ ավելի սերտացնել համագործակցությունը ԶԼՄ-ների հետ՝ կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով հանրության կարծիքն ու գնահատականը: Լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունները, ընկերություններից համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո, կօգտագործվեն մատուցվող ծառայությունների որակի ուղղությամբ հանձնաժողովի նպատակային ուսումնասիրություններում:

Պարբերաբար կթարմացվի և կհարստացվի ինտերնետային կայքը, դրանից օգտվող լրագրողների համար կստեղծվեն աշխատանքային նպաստավոր պայմաններ:

2008 թվականի ընթացքում կշարունակվի համագործակցությունը ընկերությունների հանրային կապերի և մամուլի պատասխանատուների հետ՝ մասնակցություն մամուլի ասուլիսների, լրատվական զանազան միջոցառումների, տեղեկատվության փոխանակում, համատեղ միջոցառումների ծրագրում և անցկացում:

## *9. Համագործակցություն*

Հանձնաժողովը, համագործակցելով Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի շրջանակներում գործող «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության հետ, կիրականացնի հեռահաղորդակցության զարգացած ենթակառուցվածք ունեցող եվրոպական և ամերիկյան, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործում զարգացման բարձր տեմպեր ունեցող ասիական և աֆրիկական երկրներում համընդհանուր ծառայությունների

մապուցման փորձի ուսումնասիրություն:

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն ստանալու և այն Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններից ելնելով տեղայնացնելու նպատակով, հանձնաժողովը կշարունակի գործուն համագործակցությունը հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) ստորաբաժանումների հետ: Նախատեսվում է ՀՄՄ-ի համաշխարհային գիտաժողովներին (կոնֆերանսներին) մասնակցել զեկուցումներով, որոնցում հեռահաղորդակցության միջազգային միության անդամ պետությունների քննարկմանը կներկայացվեն Հայաստանի Հանրապետությունում կատարված աշխատանքները էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ազատ շուկայական հարաբերությունների ներդրման և հաստատման գործընթացում:

Հանձնաժողովը հեռահաղորդակցության կարգավորման հարցերով սերտորեն համագործակցում է «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության հետ: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ հանձնաժողովի մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, «Բերինգ Փոյնթ» ընկերության, Միջազգային հեռահաղորդակցության ընկերակցության կողմից կկազմակերպվեն մի շարք սեմինարներ՝ «Համընդհանուր ծառայություններ և համընդհանուր հասանելիություն», «Հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարներ» թեմաներով:

Միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովը 2008 թվականին ևս կշարունակի իր մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացները, ինչպես նաև համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ: 2008 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը՝

-էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին,

-Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության աջակցությամբ հանձնաժողովի աշխատակազմի համար նախատեսված՝ հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող հիմնահարցերի վերաբերյալ մի շարք ուսուցողական միջոցառումների, ինչպես նաև ոլորտի համաժողովներին և այլ հանդիպումներին,

-ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթությամբ զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

2008 թվականին հանձնաժողովը կշարունակի համագործակցությունը նաև Իռլանդիայի կարգավորող մարմնի հետ՝ փորձի փոխանակման, մասնագետ կադրերի վերապատրաստման և բազմաթիվ այլ ուղղություններով: